ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

#31

ՆՈՅԵՄԲԵ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017

Նորություններ

Հետազոտություններ

Միջոցառումներ

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

http://ngngo.net/
NEW GENERATION HUMANITARIAN NGO
ngngo.ARMENIA
ngngo.armenia

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՁԻԱՀ-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՎԱՆ

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կազմակերպել էր հանդիպում-քննարկում տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Բացման խոսքով հանդես եկավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ՝ Սերգեյ Գաբրիելյանը, որը հակիրճ ներկայացրեց ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերը:

Բացման խոսքը շարունակեց ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերը, որը նույնպես ներկայացրեց Հայաստանում գոյություն ունեցող ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խտրականության հետ կապված հիմնախնդիրները և ողջունեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գործունեությունը այդ ոլորտում:

ՄԻԱՎ-ի գծով փորձագետ Միհրան Սևումյանը ներկայացրեց «ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների կարիքի և որակի գնահատում՝ ՏՍՏ-ների, Տրանս* անձանց, ԿՍԿ-ների, ԹՆՕ-ների և ՄԻԱՎ-ով ապրող անձանց շրջանում» հետազոտության ու գնահատման հակիրճ նկարագիրը, որը իրականացվել էր Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում: Այնուհետև ծրագրի ֆինանսական փորձագետ Ահարոն Բարսեղյանը ներկայացրեց իրականացված հետազոտությունների ֆինանսական վերլուծությունը:

Երկու հետազոտությունների արդյունքները նախատեսվում է ներկայացնել որպես առաջարկ ՀՀ ՄԻԱՎ-ին և ՁԻԱՀ-ին հակազդման 2017-2021թթ. ազգային ծրագրում ներառելու համար:

Կազմակերպության իրավաբաններ Հայկ Հայրապետյանն ու Անահիտ Մկրտչյանը ներկայացրեցին Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում կատարված առողջապահության ոլորտում մարդու իրավունքների խախտման դեպքերի փաստագրման արդյունքները, իրավական օրենսդրության հետազոտությունը, կազմակերպության կողմից վարվող իրավաբանական գործերի ընթացքը, գրանցված հաջողությունները և իրավական համակարգում առկա օրենսդրական բացերը:

Քննարկվեց նաև առավել ռիսկային խմբերի ներկայացուցիչների ներգրավվածության անհրաժեշտությունը որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի կազմի փոփոխման և համալրման համար SUS և Տրանս* համայնքներից ներկայացուցիչներ ընդգրկելու անհրաժեշտության մասին:

Հանդիպմանը համայնքի կարիքներից, բացերից և խնդիրներից խոսեցին նաև Տրանս* համայնքի ներկայացուցիչ Ժասմինան և SUS համայնքի ներկայացուցիչ Էմիլ Ավետիսյանը:

Հանդիպումը ամփոփեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը՝ կոչ անելով շարունակել միասնական պայքարը թե ՁԻԱՀ-ի, և թե ատելության, խարանի և խտրականության դեմ:

Հանդիպում-քննարկումը կազմակերպվել է Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն և հզորացում» և ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից, Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Առողջության Իրավունք» ծրագրերի շրջանակներում, որոնք իրականացվում են «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից

ԼԱՅՖ-3 ԱՐՏԱԳՆԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ SUS ԵՎ ՏՐԱՆՍ* ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդեն երրորդ անգամ տեղի ունեցավ ԼԱՅՖ արտագնա տեղեկատվական հարթակը: Այս անգամ ևս այն կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Առողջության Իրավունք» ծրագրի շրջանակներում SUS և Տրանս* սկսնակ ակտիվիստների համար:

Տեղեկատվական հարթակի նպատակն էր SUS և Տրանս* անձանց շրջանում բարձրացնել առողջության իրավունքի վերաբերյալ գիտելիքները, նպաստել իրավագիտակցության բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել համայնքների ներգրավվածությանը ՄԻԱՎ-ին հակազդման ազգային մարմիններում:
ԼԱՅՖ 3-ի առաջին օրը մասնակիցները պլենար նիստի շրջանակներում հանդիպեցին Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ներկայացուցիչ Լելա Լոմիայի հետ, որի ընթացքում խոսվեց համայնքի ընդհանուր հիմնախնդիրների, առողջության ոլորտում իրավունքների ոտնահարման, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման ոլորտում ԼԳԲՏԻ+ անձանց կարիքների և ծրագրերի մասին: Տրանս* համայնքի ներկայացուցիչները ներկայացրեցին առողջության ոլորտում իրենց հուզող

խնդիրները, այն է հորմոնաթերապիայի և վերամասնագիտացված էնդոկրինոլոգների բացակայության հարցը, ինչպես նաև խոսվեց ոստիկանության կողմից ոտնահարվող դեպքերի և հասարակության ու պետական մարմինների տրանսֆոբ վերաբերմունքի մասին: Այնուհետև մասնակիցները տեղափոխվեցին քաղաք Աղվերան, որտեղ էլ շարունակվեց դասընթացների շարքը: Առաջինը ներկայացվեց «Սեռականություն» թեման, որի ընթացքում դասընթացի հոգեբան, սեռականության փորձագետ Էլվիրա Մելիքսեթյանը ներկայացրեց սեռականություն հասկացությունը, պատմեց գենդերի և նրա տարբերակումների մասին: Խոսվեց նաև սեռական կողմնորոշման և նրա բազմազանության մասին: Երիտասարդները պատրաստեցին յուրահատուկ ուտեստներ և աղցաններ:

Կարելի էր նկատել, որ նրանք թիմային մոտեցում էին ցուցաբերում՝ աշխատելով օգնել իրար, ինչը շատ ոգևորող էր: Հետաքրքիր էր նաև այն, որ ոմանք եկել էին սովորելու, թե ինչպես ուտեստ պատրաստել: Մասնակիցներից Էմիլ Ավետիսյանը, որը նաև հանդիպանում է «Առողջության իրավունք» ծրագրի SUS համայնքի մոբիլիզացնող, պատրաստեց լազանյա կիսվելով մասնակիցների հետ բաղադրատոմսով:

Պատրաստելուց հետո բոլորը նստեցին մեկ սեղանի շուրջ և իրենց պատրաստած ուտեստներն ու դեսերտները վայելելուն զուգահեռ սկսեցին նոր գաղափարներ ներկայացնել:

Երկրորդ օրը նույնպես նախատեսված էր պլենար նիստ, որին մասնակցում էին ECOM-ի ծրագրերի ղեկավար Ելենա Գերմանը տեսազանգի միջոցով, ում մասնակիցները հղեցին ծրագրին առնչվող իրենց հետաքրքրող հարցերը: Որից հետո ելույթ ունեցավ «Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք» ՀԿ-ի գործադիր տնօրեն Մամիկոն Հովսեփյանը, ով ներկայացրեց իր անձնական փորձը ակտիվիզմի ոլորտում:

Մ. Հովսեփյանը նույնպես զերծ չմնաց հարցերի տեղատարափից, որոնք ուղղեցին մասնակիցները և ստացան սպառիչ պատասխաններ: Այնուհետև «Առողջության Իրավունք» ծրագրի ղեկավար Սերգեյ Գաբրիելյանը և ծրագրի համակարգող Արտյոմ Մովսեսյանը մասնակիցների հետ զրուցեցին Հայաստանում ՄՀՀ աշխատանքների, որոշումների կայացման գործընթացում SUS և Տրանս* համայնքների

ներգրավվածության կարևորության, նաև այն մասին, թե ինչպես են SUS և Տրանս* համայնքների ներկայացուցիչները տեսնում «Առողջության Իրավունք» ծրագրի շարունակականությունը:
Արտագնա հանդիպման վերջում կատարվեց դասընթացի գնահատում, որից հետո մասնակիցներին շնորհվեցին վկայականներ:

«Առողջության Իրավունք» ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ՄԻԱՎ-Ի և ՁԻԱՀ-Ի ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ SUS-ՆԵՐԻ (տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդ)ԵՎ ՏՐԱՆՍ* ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ լնդային տրանսուդատի հետազոտության իրականացումը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում. 2017 թվականի օգոստոսից մինչև Դեկտեմբերի 30-ը հետազոտվել է 363 շահառու, որի ընթացքում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի **8** դեպք:



Ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության կողմից և ֆինանսավորվում է «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի կողմից, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃԵՑՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Այս անգամ «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում 2017 թ.-ի նոյեմբերի 16-ից 17-ը ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում տեղի ունեցավ դասընթաց հոգեբանների և ՀՀ բժշկական ուսումնական հաստատությունների ուսանողների համար «Սեռականություն» և «Առողջության իրավունք» թեմաներով:
Դասընթացի բացումն իրականացրեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ, «Առողջության իրավունք» ծրագրի ղեկավար Սերգեյ Գաբրիելյանը, որը ներկայացրեց ծրագրի նպատակները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները:

Առաջին օրվա թեման էր «Սեռականությունը»: Փորձագետ Էլվիրա Մելիքսեթյանը մասնակիցներին խաղ-վարժանքի միջոցով բացատրեց, թե ինչ է այն և որոնք են նրա կոմպոնենտները: Խոսվեց սեռական ինքնության, սեռական վարքագծի և սեռական կողմնորոշման մասին, վեր հանվեց և բացատրվեց սեռական կողմնորոշման տեսակները: Որից հետո ներկայացվեց գենդերը, գենդերային ինքնությունը, գենդերային արտահայտումը, գենդերային դերերը: Մանրամասն ներկայացվեց ցիսգենդերությունը և տրանսգենդերությունը՝ իր բոլոր կոմպոնոենտներով: Հատկապես շեշտադրվեց գենդերային կարծրատիպերը և գենդերային հիմքով խտրականությունն ու բռնությունը:
Առաջին օրն ամփոփվեց մասնակիցների կողմից մասնագիտական փորձի փոխանակմամբ:
Դասընթացի երկրորդ օրվա թեման էր «Առողջության իրավունքը», որի փորձագետն էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրավաբան Անահիտ Մկրտչյանը:

Դասընթացը սկսվեց մարդու իրավունքների հասկացության մեկնաբանությամբ և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և ներպետական փաստաթղթերի ներկայացմամբ: Որից հետո Ա. Մկրտչյանը ներկայացրեց մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները, մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան և մարդու իրավունքների Եվրոպական դատարանը: Այնուհետև ներկայացվեց առողջության իրավունքը և դրա օրենսդրական կարգավորումները, խոսվեց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին:
Շեշտադրվեց հատկապես ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքները, ՄԻԱՎ-ի վերաբերյալ օրենսդրությունը և քրեական պատասխանատվությունը:
Ողջ դասընթացը անցկացվեց ինտերակտիվ խաղ-վարժանքների և տեսանյութերի դիտմամբ:
Դասընթացը ամփոփվեց մասնակիցների կողմից գնահատմամբ, որից հետո շնորհվեցին վկայականներ:

«Առողջության Իրավունք» ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ՔՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՐԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ

2017 թվականի դեկտեմբերի 14-16-ը Գյումրի քաղաքում տեղի ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված «ՔՀԿ ներկայացուցիչների կարողությունների զարգացում սեռականության ոլորտում» երկօրյա դասընթացը:

Դասընթացի առաջին օրվա թեման էր «Սեռականություն»-ը, որի փորձագետ Ալիկ Ուստյանը: Խմբային աշխատանքի միջոցով մասնակիցների հետ միասին վեր հանվեցին սեռականության գաղափարը և նրա կոմպոնենտները: Խմբային աշխատանքից հետո տրվեց սեռականության հստակ սահմանումը, խոսվեց կենսաբանական սեռերի, միջսեռական ձևափոխությունների տեսակների մասին: Ներկայացվեց սեռական կողմնորոշումը և իր տեսակները: Ա. Ուստյանը համեմատականներ տարավ սեռական կողմնորոշման և սեռական վարքագծի միջև՝ մասնակիցների համար տարբերությունը ավելի հստակեցնելու համար: Այնուհետև ներկայացվեց գենդերը, գեներային ինքնությունն ու տեսակները, գենդերային դերերը և գենդերային արտահայտումը: Առանձին շեշտադրումով խոսվեց տրանս* անձանց մասին՝ ընդգծելով տրանսսեքսուալների, հագուստափոխների և դրեգ-քուիների տարբերությունները:

Երկրորդ օրը փորձագետ, ՆՍՀԿ իրավաբան/փաստաբան Հայկ Հայրապետյանը ներկայացրեց «Մարդու իրավունքներ» թեման: Թեմայի շրջանակներում ներկայացվեց մարդու իրավունքներ հասկացությունը՝ ինչպես խմբային աշխատանքի, այնպես էլ տեսանյութի դիտման միջոցով: Քննարկվեց խտրականություն հասկացությունը, Եվրոպական դատարանի մեկնաբանությունները դրա վերաբերյալ: Մասնակիցներին բացատրվեց զրպարտությունը և վիրավորանքը: Խոսվեց նաև իրավունքի պաշտպանության ներպետական մեխանիզմների մասին: Դասընթացն ավարտվեց ընդհանուր գնահատմամբ և վկայականների հանձնմամբ:

2017 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԼԱՅՖ ԱՐՏԱԳՆԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԸ:

Չորրորդ և 2017թ.-ի վերջին ԼԱՅՖ 4 արտագնա տեղեկատվական հարթակը: Այս անգամ ևս այն կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Առողջության Իրավունք» ծրագրի շրջանակներում SUS և Տրանս* սկսնակ ակտիվիստների համար:

Տեղեկատվական հարթակի նպատակն էր SUS և Տրանս* անձանց շրջանում բարձրացնել առողջության իրավունքի վերաբերյալ գիտելիքները, նպաստել իրավագիտակցության բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել համայնքների ներգրավվածությանը ՄԻԱՎ-ին հակազդման ազգային մարմիններում:

ԼԱՅՖ 4-ի առաջին օրը մասնակիցները տեղափոխվեցին քաղաք Աղվերան, որտեղ էլ սկսվեց դասընթացների շարքը: Առաջինը ներկայացվեց «Սեռականություն» թեման, որի ընթացքում սեռականության փորձագետ Ալիկ Ուստյանը խաղ/վարժանքների և դասախոսությունների միջոցով ներկայացրեց սեռականություն հասկացությունը, պատմեց գենդերի և նրա տարբերակումների մասին: Խոսվեց նաև սեռական կողմնորոշման և նրա բազմազանության մասին:

Այնուհետև ներկայացվեց «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելում» թեման: Թեմայի փորձագետ Լևոն Չիլինգարյանը ներկայացրեց ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտման եղանակների և դրանց կարևորության մասին, այնուհետև խոսվեց ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման մասին, խաղ/վարժանքների միջոցով մասնակիցներին բացատրվեց, որ ՄԻԱՎ-ը վերաբերում է մեզանից յուրաքանչյուրիս և դրա հիմքով խտրականությունն անհիմն է:

ԼԱՅՖ 4-ի երկրորդ օրը ՆՍՀԿ իրավաբան Անահիտ Մկրտչյանը «Առողջության իրավունք» թեմայի շրջանակներում մասնակիցներին ներկայացրեց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը և սպասարկումը, ինչպես նաև ՀՀ-ում բժշկական հիմնարկներում բժշկական անձնակազմի ցածր իրավագիտակցությունը և ԼԳԲՏ+ անձանց առնչվող բժշկական գիտելիքների ցածր մակարդակի, բժշկական անձնակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքը և խտրականության հաղթահարման մեխանիզմները:

Հանդիպման ողջ ընթացքն ուղեկցվում էր տեսահոլովակների դիտմամբ և գործնական աշխատանքներով:

«Մարդու իրավունք» թեմայի շրջանակներում, խոսվեց մարդու հիմնարար իրավունքների, Մարդու իրավունքների Եվրոպական Դատարան դիմելու ընթացակարգի, ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքների, պարտավորությունների և արտոնությունների մասին: Հանդիպման ավարտին մասնակիցների հետ անցկացվեց գաղտնագրված խնդիրների վերհանում և քննարկում, որի ընթացքում յուրաքանչյուր մասնակից անանուն կերպով փորձագետին հանձնեց իր խնդիրը, այնուհետև այդ խնդիրը քննարկվեց ողջ խմբի կողմից:
Երկրորդ օրը նախատեսված էր նաև պլենար նիստ, որին մասնակցում էին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը և ֆինանսիստ Արման Սահակյանը, ում մասնակիցները հղեցին ծրագրին առնչվող իրենց հետաքրքրող հարցերը: Այնուհետև, «Colourful House» ՀԿ նախագահ Գարիկ Ամոլիկյանը խոսեց «Արվեստը LGBT+ համայնքի հիմնախնդիրների բարձրաձայնման և լուծման միջոց»

«Առողջության Իրավունք» ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

Յուրաքանչյուր ոք
ունի առողջության
պահպանման իրավունք

Everyone has the right to health care

«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

http://ngngo.net/
Email: newgenerationngo@gmail.com

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը: